ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

08 հունվար 2025 թվական N 01-Լ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրել է մի շարք պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում պետական ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համապատասխան հայտարարագրերի վերլուծություն, որի ընթացքում արձանագրվել է, որ մի շարք դեպքերում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում պետական ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, բացի աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարներից, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ստացել են նաև այլ եկամուտներ, ինչպես նաև ղեկավարվելով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, 21-րդ հոդվածի 11-12-րդ մասերով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ***որոշեց.***

1. Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի

հայտարարագրերի՝ Եկամուտների հայտարարագրերը և դրա հիման վրա իրականացնել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում պետական պաշտոն զբաղեցնող անձանց 2023 թվականի՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի՝ Եկամուտների հայտարարագրում հայտարարագրված՝ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտների վերլուծություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Մ. ԳԱԼՍՏՅԱՆ

ք. Երևան